ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 22.12.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/47

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) հաշվի առնելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 07.12.2017թ. ներկայացված՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 08.11.2017թ. թիվ 3 և 14.11.2017թ. թիվ 4 արձանագրությունները, 27.11.2017թ. թիվ 3 արձանագրությամբ կայացված պայմանագիր կնքելու մասին որոշումը դադարեցնելու, ինչպես նաև «Գալիմա», «Արմավիրի կաթի գործարան», «Գարդմեն», «Դավիթ-84» ՍՊ ընկերությունների հայտերը մերժելու պահանջների մասին բողոքը և հիմք ընդունելով Խորհրդին ուղղված՝ ԳԲԽ-ԱՄ-2017/47 բողոքն առանց քննության թողնելու մասին «Ֆոտոն» ՍՊԸ-ի 21.12.2017թ. գրությունը, ինչպես նաև հաշվի առնելով «Գարդմեն» ՍՊԸ-ի կողմից 21.12.2017թ. ներկայացված համանման բողոքը և Խորհրդին ուղղված՝ համանման բողոքն առանց քննության թողնելու մասին 22.12.2017թ. գրությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 21.04.2017թ. «Հայաստանի Հանրապետության

գնումների բողոքարկման խորհրդի գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 1 որոշման 45-րդ կետի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 07.12.2017թ. ներկայացված բողոքը և դրա հիման վրա «Գարդմեն» ՍՊԸ-ի կողմից 21.12.2017թ. ներկայացված համանման բողոքը թողնել առանց քննության:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**